ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.08.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-30/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-30/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից 05.08.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված համանման բողոքները, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-30/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Ֆլեշ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերությունը հանդիսանում է ՀՀ ՊՆ կարիքների համար ավիավառելիքի ձեռքբերման թիվ «ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով ընթացակարգի մասնակից:

«Ֆլեշ» ՍՊԸ-ն գտնում է, որ ընթացակարգը անցկացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտումներով՝ ներքոհիշյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է գնման առարկայի բնութագրերին ներկայացվող պահանջները, որոնց համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող

ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ըստ «Ֆլեշ» ՍՊԸ-ի՝ «ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով ընթացակարգի հրավերին կից թիվ 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերով ամբողջությամբ և հստակ նկարագրված չեն ձեռքբերվող ավիավառելիքի հատկանիշները, քանի որ այդ բնութագրերի վերաբերյալ այլընտրանքային մեկնաբանություններ են առաջացնում: Մասնավորապես, թիվ 1 հավելվածի «Տեխնիկական հատկանիշը» սյունակում նշված է վառելիքի ստանդարտը (ԳՕՍՏ 10227-86 /ԳՕՍՏ Ռ 52050-2006/ կամ համարժեք), որը (նշված ստանդարտը) սահմանում է ռեակտիվ շարժիչների վառելիքի տարբեր տեսակների (РТ /հրտիռային վառելիք/, ТС-1, Т-1С, Т-1, Т-2) տեխնիկական պահանջները, չմանրամասնելով, թե վերը նշված վառելիքի տեսակներից որ վառելիքն է հանդիսանում գնման առարկա: Այս պահանջի խախտումը էական է, քանի որ վերը նշված վառելիքի տեսակները շատ տարբեր են, դրանք նույնիսկ նույն տարաներում տեղափոխելը և պահպանելն արգելված է, ինչպես նաև դրանք ունեն շուկայական տարբեր արժեքներ:

Բացի այդ, թիվ 1 հավելվածում նշված տեխնիկական հատկանիշներում թվարկված ցուցանիշները անհասկանալի են, դեռ ավելին, պարունակում են հակասություններ: Մասնավորապես, թիվ 1 հավելվածի «Տեխնիկական հատկանիշը» սյունակում նշված՝ թորման ցուցանիշներում բառացիորեն նշված է հետևյալը. «թորման սկիզբը՝ ոչ բարձր՝ 150 աստիճան՝ ըստ Ցելսիուսի», այնուհետև փակագծերում նշված է «(ոչ բարձր՝ 205 աստիճան՝ ըստ Ցելսիուսի)»:

Միաժամանակ, թորման ավարտի ցուցանիշների մասում նշված է հետևյալը. «թորման ավարտը՝ ոչ բարձր՝ 250 աստիճան՝ ըստ Ցելսիուսի», այնուհետև փակագծերում նշված է «(ոչ բարձր՝ 300 աստիճան՝ ըստ Ցելսիուսի)»:

Գնման առարկայի բնութագրերում տեղ գտած, վերը հիշատակված անորոշ և ոչ հստակ, էական հակասություններ պարունակող ձևակերպումների առկայության պայմաններում ընթացակարգի մասնակից «Ֆլեշ» ՍՊԸ-ն հնարավորություն չի ունեցել ներկայացնելու ճիշտ և հիմնավոր գնային առաջարկ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդը բողոքի քննարկման արդյունքներով իրավունք ունի կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ, ինչպես նաև դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ:

Ելնելով վերոգրյալից՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ն խնդրել է կասեցնել գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի արդյունքների ամփոփումը և որոշումների կայացումը, ինչպես նաև դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի արդյունքների ամփոփման արդյունքում արդեն կայացված որոշումները, պատվիրատուին պարտավորեցնել գնման ընթացակարգը ճանաչել չկայացած և հայտարարել նոր ընթացակարգ՝ վերացնելով գնման առարկայի բնութագրերում առկա հակասությունները և անորոշությունը:

2. «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Մաքսիուր» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերությունը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով ավիավառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգին և համարում է, որ ընթացակարգը անցկացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտումներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է գնման առարկայի բնութագրերին ներկայացվող պահանջները, որոնց համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը,

չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ըստ «Մաքսհուր» ՍՊԸ-ի՝ «ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով ընթացակարգի հրավերին կից թիվ 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրում հստակ նկարագրված չեն ձեռքբերվող ավիավառելանյութի հատկանիշները: Թիվ 1 հավելվածի «Տեխնիկական հատկանիշը» սյունակում նշված է վառելիքի ստանդարտը (ԳՕՍՏ 10227-86 /ԳՕՍՏ Ռ 52050-2006/ կամ համարժեք), որը սահմանում է ռեակտիվ շարժիչների վառելիքի տարբեր տեսակների (РТ /հրտիռային վառելիք/, ТС-1, Т-1С, Т-1, Т-2) տեխնիկական պահանջները, չմանրամասնելով, թե վերը նշված վառելիքի տեսակներից որ վառելիքն է հանդիսանում գնման առարկա: Այս պահանջի խախտումը էական է, քանի որ վերը նշված վառելիքի տեսակները շատ տարբեր են, նույնիսկ չի թույլատրվում դրանք պահել կամ տեղափոխել նույն տարաներով և ունեն շուկայական տարբեր գներ: Բացի այդ թիվ 1 հավելվածում նշված տեխնիկական հատկանիշներում նշված ցուցանիշները անհասկանալի են և ունեն հակասություններ: Թիվ 1 հավելվածի «Տեխնիկական հատկանիշը» սյունակում նշված ցուցանիշում բառացի նշված է՝ (թորման սկիզբը՝ ոչ բարձր 150^{0}C (ոչ բարձր 205^{0}C)) և (թորման ավարտը՝ ոչ բարձր 250^{0}C) (ոչ բարձր 300^{0}C)):

Գնման առարկայի տեխնիկական բնութագրում տեղ գտած անորոշ և էական հակասություններ պարունակող ձևակերպումների առկայության պատճառով ընկերությունը հնարավորություն չի ունեցել ներկայացնելու հիմնավոր և ճիշտ գնային առաջարկ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդը բողոքի քննարկման արդյունքներով իրավունք ունի կիրառելու միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, ինչպես նաև գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի (գնահատող հանձնաժողովի) կայացրած որևէ որոշումը կասեցնելուն ուղղված միջոցներ, և դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ:

Ելնելով վերոգրյալից՝ «Մաքսհուր» ՍՊԸ-ն խնդրել է կասեցնել գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի արդյունքների ամփոփումը և որոշումների կայացումը, ինչպես նաև դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի

արդյունքների կայացված որոշումները և պատվիրատուին պարտավորեցնել գնման ընթացակարգը ճանաչել անվավեր և հայտարարել նոր ընթացակարգ:

3. ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 07.08.2014թ. N 04/032-1352 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 05.08.2014թ. «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքների վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.08.2014թ. N ԴՎԱ/2209 գրությամբ «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքների վերաբերյալ հայտնել է, որ պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությանը համաձայն՝ «համաձայն ղեկավար փաստաթղթերի՝ հնարավոր է խառնել և համատեղ պահպանել JET A-1 և SU-1 տեսակի ավիվառելանյութերը: Հաշվի առնելով, որ ԳOUS-10227-ով տրված տեխնիկական բնութագրերն իրենց մեջ ներառում են SU-1, S-1, S-1U, S-2 և ՌS տեսակի ավիավառելիքներ, ուստի գնման ժամանակացույցի տեխնիկական բնութագրերում կոնկրետ կնշվի ավիավառելիքի տեսակը:

Ի լրումն 08.08.2014թ. N ԴՎԱ/2209 գրության՝ Պատվիրատուն 15.08.2014թ. ԴՎԱ/2269 գրությամբ հայտնել է, որ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայումս հստակեցվում է ձեռքբերվող ավիավառելիքի տեսակը, և քանի որ ԳOUS-10227-ով ներկայացված են մի քանի ապրանքատեսակների տեխնիկական բնութագրեր, ուստի հետագայում այլընտրանքային մեկնաբանությունները բացառելու նպատակով կներկայացվի միայն մեկ տեսակ ավիավառելիքի տեխնիկական բնութագիր:

ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է նաև, որ տեխնիկական բնութագրում ներկայացված (թորման սկիզբը և թորման ավարտը) ցուցանիշների տարբերությունները պայմանավորված են ձեռքբերվող երկու տեսակի՝ JET A-1 և SU-1 ավիավառելանյութերով (փակագծերում ներկայացված է) JET A-1 տեսակի ավիավառելանյութի պարամետրերը:

4. «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն 11.08.2014թ. N 11/1 գրությամբ հայտնել է, որ ընկերությունը 02.08.2014թ., ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ճանաչվել է հաղթող՝ 1600 տոննա ավիավառելանյութ մատակարարելու համար 589.000 ՀՀ դրամ՝ 1 տոննայի դիմաց:

Ընթացակարգի կապակցությամբ բողոքներ են ներկայացրել «Ֆլեշ» և «Մաքսիուր» ՍՊԸ-ները այն պատճառաբանությամբ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը պարզաբանում չի տվել, թե 10227-86 ԳՕՍՏ-ով 5 ենթատեսակներից որ ենթատեսակի կարիքը ունի և իրենց հայտարարված գինը վերաբերվում է այդ ենթատեսակներից մեկին:

«Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերությունը քաջատեղյակ է, որ համաձայն 10227-86 ԳՕՍՏ-ի՝ մատակարարվել է ТС-1. Высший сорт ավիավառելանյութը:

Ինչ վերաբերվում է հայտում նշված Ռ 52050-2006 ԳՕՍՏ-ին, ապա դա համապատասխանում է «Топливо авиационное для газотурбинных двигателей ДЖЕТ А-1 (JET A-1)», որը նույն քանակությամբ և նույն գնով «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն պատրաստ է մատակարարել:

5. ԳԲԽ-30/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից 05.08.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված համանման բողոքները բավարարել մասնակի՝ դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավիավառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

6. ԳԲԽ-30/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-30/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովը ուսումնասիրել է «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից 05.08.2014թ. ներկայացված համանման բողոքները, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն 11.08.2014թ. N 11/1 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 08.08.2014թ. N ԴՎԱ/2209 և 15.08.2014թ. ԴՎԱ/2269 գրությունները և դրան կից փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավիավառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

Վերոհիշյալ ընթացակարգի Հրավերին կից տեխնիկական բնութագրով պահանջվել է ավիավառելանյութ ԳՕՍՏ 10227-86 (ԳՕՍՏ Ռ 52050-2006) կամ համարժեք՝

- Մինչգերձայնային ավիացիայի ռեակտիվ ինքնաթիռների համար,
- Խտությունը 20^0 C դեպքում ոչ պակաս՝ 775 կգ/մ^3 (15^0 C դեպքում՝ 775-840 կգ/մ^3),
- Թորման սկիզբը՝ ոչ բարձր՝ 150^0 C (ոչ բարձր 205^0 C),
- Թորման ավարտը՝ ոչ բարձր՝ 250^0 C (ոչ բարձր 300^0 C),
- Ծծմբի առկայությունը ոչ ավել՝ 0.2 %,
- հրավտանգ,
- Տեղափոխումը՝ երկաթուղային և ավտոմոբիլային ցիստեռններում:

Պատվիրատուի կողմից կազմակերպված Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ֆլեշ», «Մաքսիուր» և «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ները:

«Ֆլեշ» ՍՊԸ-ն և «Մաքսիուր» ՍՊԸ-ն Կենտրոնին 05.08.2014թ. ներկայացրած համանման բողոքներով հայտնել են, որ ընթացակարգի հրավերին կից տեխնիկական բնութագրով ամբողջությամբ և հստակ նկարագրված չեն ձեռքբերվող ավիավառելիքի հատկանիշները, քանի որ այդ տեխնիկական բնութագրերը այլընտրանքային մեկնաբանությունների տեղիք են տալիս, մասնավորապես, «Տեխնիկական հատկանիշը» սյունակում նշված է վառելիքի ստանդարտը ԳՕՍՏ 10227-86 (ԳՕՍՏ Ռ 52050-2006 կամ համարժեք), որը (նշված ստանդարտը) սահմանում է ռեակտիվ շարժիչների վառելիքի տարբեր տեսակների (РТ /հրտիռային վառելիք/, ТС-1, Т-1С, Т-1, Т-2) տեխնիկական

պահանջները: Պատվիրատուի կողմից չի մանրամասնվել, թե վերը նշված վառելիքի տեսակներից որ վառելիքն է հանդիսանում գնման առարկա:

«Ֆլեշ» ՍՊԸ-ն և «Մաքսիուր» ՍՊԸ-ն խնդրել են կասեցնել գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի արդյունքների ամփոփումը և որոշումների կայացումը, ինչպես նաև դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի արդյունքների ամփոփման արդյունքում արդեն կայացված որոշումները, պատվիրատուին պարտավորեցնել գնման ընթացակարգը ճանաչել չկայացած և հայտարարել նոր ընթացակարգ:

Կենտրոնում՝ 2014 թվականի օգոստոսի 8-ին, ժամը 17:00-ին կազմակերպված նիստի ժամանակ, «Ֆլեշ» և «Մաքսիուր» ՍՊԸ-ների ներկայացուցիչները պնդեցին իրենց կողմից ներկայացված՝ գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի արդյունքների ամփոփումը և որոշումների կայացումը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը, իսկ Պատվիրատուի ներկայացուցիչները հայտնեցին, որ չեն առարկում վերը նշված միջնորդության կապակցությամբ:

ԳԲԽ-30/14 բողոքը քննող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի պահանջներով, 08.08.2014թ. որոշում կայացրեց կասեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավիավառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի արդյունքների ամփոփումը և որոշումների կայացումը՝ մինչև ԳԲԽ-30/14 բողոքը քննող հանձնաժողովի կողմից բողոքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

Կենտրոնում՝ 2014 թվականի օգոստոսի 14-ին, ժամը 17:00-ին կազմակերպված նիստի ժամանակ, «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսիուր» ՍՊԸ-ի ներկայացուցիչները պնդեցին իրենց կողմից ներկայացված բողոքներով նշված փաստերը: ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները հայտնեցին, որ ընթացակարգի հրավերին կից տեխնիկական բնութագրով պահանջված ԳՕՍՏ 10227-86 տեսակի ավիավառելիքը իր մեջ ներառում է մի քանի տեսակի ավիավառելիքներ, տեխնիկական բնութագրով ԳՕՍՏ 10227-86-ում թվարկված բոլոր տեսակի վառելիքները, ըստ էության, համապատասխանում են տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին, իսկ Պատվիրատուի կողմից չի հստակեցվել, թե ինչ տեսակի ավիավառելիք է անհրաժեշտ, ինչի հետևանքով չի

բացառվում, որ մասնակից ընկերությունները կարող են բերել այնպիսի ավիավառելիքի տեսակ, որն անհրաժեշտ չէ ՀՀ պաշտպանության նախարարությանը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.08.2014թ. ԴՎԱ/2269 գրությամբ հայտնել է, որ ԳOUS-10227-ով ներկայացված են մի քանի ապրանքատեսակների տեխնիկական բնութագրեր, ուստի հետագայում այլընտրանքային մեկնաբանությունները բացառելու նպատակով պատասխանատու ստորաբաժանման կողմից կհստակեցվի ձեռքբերվող ավիավառելիքի տեսակը և կներկայացվի միայն մեկ տեսակի ավիավառելիքի տեխնիկական բնութագիր:

Կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ԳOUS 10227-86 տեսակի ավիավառելիքը իր մեջ ներառում է հետևյալ տեսակի վառելիքներ.

- ТС-1 տեսակի ավիավառելիքը, որն ունի երկու ենթատեսակ՝ Высший сорт ОКП 0251210205 և Первый сорт ОКП 0251210204,
- Т-1С-Высший сорт ОКП 0251210203,
- Т-1-Первый сорт ОКП 0251210202,
- Т-2-Первый сорт ОКП 0251210206,
- РТ-Высший сорт ОКП 0251210201:

ԳOUS 10227-86-ի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ վերջինիս մեջ ներառվող ավիավառելիքները ունեն տարբեր տեխնիկական բնութագրեր, օրինակ՝ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով ավիավառելիքի խտությունը 20^0 C դեպքում սահմանվել է, որ այն պետք է լինի ոչ պակաս 775 կգ/մ^3-ից, իսկ ԳOUS 10227-86-ով սահմանված ТС-1 տեսակի Высший сорт ավիավառելիքի դեպքում այդ պարամետրը կազմում է 780 կգ/մ^3, ТС-1 տեսակի Первый сорт դեպքում՝ 775 կգ/մ^3, Т-1С-ի Высший сорт դեպքում՝ 810 կգ/մ^3, Т-1 Первый сорт դեպքում՝ 800, Т-2 Первый сорт դեպքում՝ 755 և РТ Высший сорт դեպքում՝ 775:

Վերոգրյալից հետևում է, որ վերը նշված ավիավառելիքները ունեն տարբեր տեխնիկական բնութագրեր և, հետևաբար, կարող են ունենալ շուկայական տարբեր արժեքներ:

Բացի այդ, տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը, ըստ որի թորման սկիզբը պետք է լինի ոչ բարձր՝ 150 աստիճան՝ ըստ Ցելսիուսի, (ոչ բարձր՝ 205 աստիճան՝ ըստ Ցելսիուսի), իսկ թորման ավարտը ոչ բարձր՝ 250 աստիճան՝ ըստ Ցելսիուսի, (ոչ բարձր՝ 300 աստիճան՝ ըստ Ցելսիուսի), ձևակերպված է անորոշ, հակասական, որը ալընտրանքային մեկնաբանությունների տեղիք է տալիս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի.

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում,
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը,
- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Գտնում ենք, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի Հրավերին կից տեխնիկական բնութագրով սահմանված են անորոշ և էական հակասություններ պարունակող պայմաններ, որոնք այլընտրանքային մեկնաբանությունների տեղիք են տալիս: Բացի այդ, տեխնիկական բնութագրով պահանջելով ԳՕՍՏ 10227-86 (ԳՕՍՏ Ռ 52050-2006) ավիավառելանյութ, Պատվիրատուն չի հստակեցրել, թե ԳՕՍՏ 10227-86-ի մեջ ներառված տարբեր ավիավառելիքի տեսակներից որ տեսակն է անհրաժեշտ, որի արդյունքում բողոք ներկայացրած ընկերությունները հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու հիմնավոր և ճիշտ գնային առաջարկ:

Վերոհիշյալի արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չեն պահպանվել Օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից 05.08.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքները բավարարել մասնակի:

2. Դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավիավառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամներ՝ Համլետ Գասպարյան

Կարապետ Խարբերդյան